ՔՍԱՆԵՒՈԹՆԵՐՈՐԴ—ՏԱՐԻ—ԹՒԻ—2172—ԵՐԵՔՇԱԲԹԻ—5—ՍԵՊՏԵՄԲԵՐ—Ն. Տ.—17—ՍԵՊՏԵՄԲԵՐ—1878

ԳԱՅՄԱՆԸ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 Մէջ.
» » Գաւառաց » 10 Մէջ.
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 4½ Մէջ.
» » Գաւառաց » 5 Մէջ.
Յանուցման տողը մէկ անգամի համար 3 զուրուշ։ Երիւ անգամի համար 2 զուրուշ։ Աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։

ԱՄԱՐԱՅ

ԳԱՅՄԱՆԸ

Գուրս գացած լրագրաց ճանրու ծախքը թմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն թմբագիր—Ցնորէնին պիտի ուղղուի, Ղալաթիա Յանտրքճըլար Ճատէսի թիւ 198, Նօրօ խան, Մասիսի գրասենեակը։

Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օսմանեան կառավարութեան և Աւստրիոյ միջև պայմանագրութիւնը տակաւին չկնքուեցաւ։ Պոսնիոյ խաղաղութեան գործն յամրաքայլ առաջ կերթայ։ Աւստրիացիք գլխաւոր քաղաքները գրաւեցին, բայց տակաւին ապստամբները քանի մ'ամուր դիրք բռնած են։ Զախ զօրավարը սեպտ. 8ին կը հեռագրէ թէ կէս օրէն վերջը Պիհաչի (Պիհէք) ամուր դիրքերուն վրայ յարձակման շարունակութիւնն 'ի բայ թողով Զավալիա քաշուեր է։ Պիհաչ փոքր քաղաք մ'է չորս հազար հինգ հարիւրի չափ գրեթէ ամենն ալ իսլամ բնակչօք, և Աւստրիոյ սահմանագլխին մօտ Ունա գետին եզերքն է։ Իսկ Զավալիա Աւստրիոյ հողին վրայ փոքր քաղաք մ'է։ Զաբարի զօրավարը Տօպոյէն սեպտ. 7 թուով կը հեռագրէ թէ սեպտ. 5ին պատերազմ մ'ըրած էր, ուր թշնամին յաղթուելով թանձր մէգի մը ժամանակ ետ քաշուեր է Սբրէչա գետին ետևի կողմը։ Զաբարի՝ Կրաչանիչա—Թրէպուք—Մակլայի ճանապարհը գրաւեր և ամրութիւններ շինել կուտայ։ Այս զօրաբաժինը տագնապալից վիճակի մը մէջ էր, և մինչև իսկ ղրոյց եղած էր թէ թշնամւոյն անձնատուր եղած է, բայց անհիմն ելաւ։ Զաբարիի օգնութիւններ ղրկուեցան, և կը յուսայուէր որ կրնայ յարձակողական շարժման սկսիլ, բայց մինչև հիմայ տակաւին չը կրցաւ շատ յառաջանալ։

Զվօրնիքի և Վիշկրատի դէմ գործելու համար՝ հրամանատար Ֆիկիփովիչ զօրավարն որոշեց Ռումանիա-Բլանինայի դիրքէն ապստամբները վանել և այն տեղերը թէկէթօֆի զօրաբաժինին գրաւել տալ։ Թէկէթօֆ սեպտ. 2ին մեկնեցաւ երեք զօրագունդով, որոց առաջինը Բիլեթել զօրավարին հրամանաց ներքև՝ երկու վաշտ զօրօք և չորս թնդանօթով թշնամւոյն բռնած դրից վրայ ճակատէն յարձակեցաւ։ Թէկէթօֆ թշնամւոյն աջ կողմէն դարձաւ, և զայն 'ի փախուստ դարձնելով Ռումանիայի խանը գրաւեց։ Այսր վրայ ապստամբք Զվօրնիքի և Ռոկաթիցայի կողմը քաշուեցան, և իրիկունը կաղինացը պարպեցին։ Աւստրիական երեք զօրագունդերը նոյն օրը Ռումանիայի խանը միացան, և ընդհանուր հրամանատարը պատուէր ղրկեց որ յիշեալ դիրքից վրայ ամրութիւն շինուի և Լէմախի զօրագունդը պահապան դիրքի հոն։ Աւստրիացիք Սէրայէվոյի մէջ յանձնախումբ մը հաստատեցին տասանորդի տուրքերն հաւաքելու համար։ Ակէ զատ թղթատարութիւն և հեռադիր կը հաստատեն։ Աւստրիա իւր զինուորական պատրաստութիւնները կը շարունակէ, և կըսուի թէ 'ի մօտոյ Պոսնիոյ մէջ իւր զօրաց թիւն երկու հարիւր տասն հազարէն աւելի պիտի ըլլայ։

Պոսնիոյ և Ալպանիոյ իսլամաց հայրենասիրական եռանդը ծայրայեղութեան իսկ կը հասնի։ Ասոնք մինչև վերջին կէտ դիմադրելու նպատակաւ միութիւն մը կազմած են, որ նախ խիստ կանոններ դրաւ իսլամութիւնը պահելու համար։ Այս կանոններէն մէկ քանին են իսլամայ համար ոգելից ըմպելեաց, խաղի, և քրիստոնէից հետ (բաց 'ի գործի համար պէտք եղած ատեն) յարաբերութեան արգելքը։ Կանայք Եւրոպական զգեստը թողով բոլորովին հին ձևով պիտի հագուին, և քրիստոնեայ ընտանեաց հետ չպիտի տեսակցին։ Ամեն իսլամ այս պատուէրները գործադրել տալու պարտականութիւն ունի։ Իսկ ասոնց չհնազանդողները խստիւ պիտի պատժուին։ Արդէն խեղճ իսլամ կին մը բարակ Եաղմուր կապած ըլլալուն պատճառաւ քարկոծութենէ հազիւ ազատած է։ Արնաւուտներուն համար անհաւանական չէ որ Մէհմէտ Ալի փաշան սպաններէ ետև ամեն տեսակ ծայրայեղութեանց մէջ իյնան։ այսու ամենայնիւ իրենց մէջ խելահաս մարդիկ կը դտնուին, և եթէ լաւ կը յիշենք՝ բուն իրենց հրատարակած յայտարարութեան մէջ խոստացած էին քրիստոնէից կեանքն և ինչքն յարգել։ Դուցէ սակաւաթիւ մաս մը վերոգրեալ կանոնադրութիւնն հաստատած լինի։ Բայց իրենց շուրջն անցած անցքերն Ալպանիոյ և Պոսնիոյ իսլամաց անտարբերութեան առարկայ չէին կրնար ըլլալ։ Սերվիա սեպտ. 10/22ին հարիւր մի թնդանօթ արձակելով իւր անկախութիւնն հռչակեց, և Միլան իշխանն յայտարարութիւն մը հրատարակելով՝ իւր ազգն այս ուրախաւէտ դէպքին առթիւ շնորհաւորեց։ Իշխանն՝ որ վեհապետական բարձրութիւն տիտղոսն առաւ, իւր նախարարաց հետ Նիշ կը գտնուի այս միջոցիս՝ նոր առած երկիրներն աչքէ անցունելու համար։ Գարատաղի իշխանն Ալպանիոյ մէջ Բօսկորիցան կը պահանջէ, որպէս զի Օսմ. կառավարութեան ըստ Պերլինի դաշնադրութեան տրուելիք հողերն, որք այժմ Գարատաղի զօրաց ձեռքն են, ետ դարձնէ։ Աւստրիացիք Պոսնիոյ մէջ կը յառաջանան, և Զվօրնիկն ու Վիշկրատն առնէ ետև, հաւանականաբար Նովի—Պազարի վրայ պիտի քալեն։ Այս ամեն իրողութիւնք Իսլամաց սրտմտութիւնը գրգռելու առիթ կըլլան։

Իսկ Պերլինի դաշնադրութեան գործադրութեանը գալով, որ Տէրութեանց Ժողովոյ դիտաւորութեան համաձայն ներկայ քաւոսին մէջ հնար եղածին չափ կարգ կանոն պիտի հաստատէր, տակաւին Ռուսիոյ վերաբերեալ կէտը միայն գործադրեցաւ։ Շումնու, Վարնա և Պաթում հետզհետէ Ռուսաց յանձնուեցան, և Ռուսիա սկսաւ մայրաքաղաքիս շրջակայ ներէն իւր զօրքն ետ քաշել և Օսմանեան գերիներն ետ դարձնել։ Թէ և ղրոյց կայ թէ Ռուսիա պատերազմական տուգանքն և գերեաց ծախքը կը պահանջէ իւր զօրքն ետ քաշելու համար, և թէ գնացած զօրաց տեղ նորերը կուգան. այսու ամենայնիւ, ըստ որոշման Տէրութեանց ժողովին, Ռուսիոյ առնելիքը չկրնար ուրիշ պահանջներէ առաջ անցնիլ, ոչ ալ հողով վճարիլ. հետևաբար դրամական խնդիրն անլուծելի կը մնայ՝ Բ. Դրան ներկայ ելմտական տագնապին պատճառաւ։

Տէրութեանց ժողովոյն ուրիշ որոշմանց գալով, ասոնց մին էր Կ. Պոլսոյ մէջ Եւրոպական յանձնաժողովոյ մը կազմութիւնն, որ Թուրքիոյ վրայ պահանջ ունեցողներուն՝ այն է արժեքի գլխոյ տէրերուն իրաւունքը պիտի ապահովէ։ Բ. Դուռն Անգղիոյ և Գաղղիոյ տէրութիւններէն խնդրեր է որ իրեն ելմտագէտ պաշտօնատարներ տան՝ իւր ելումուտքը կարգի դնելու համար։ Անգղիա տակաւին պատասխան չէ տուեր, իսկ Գաղղիա պատասխաններ է թէ պէտք է նախ գիտնայ թէ արդեօք խնդրուած պաշտօնատարները պարզ խորհրդակա՞ն պիտի ըլլան, թէ անկախ պիտի ըլլան, որպէս զի ըստ այնմ՝ որոշումներ տայ։ Եթէ յիշեալ պաշտօնատարք անկախ գիրք ունենան, Գաղղիա պատրաստ է Անգղիոյ հետ համաձայնութեամբ Բ. Դրան ելումտից կարգադրութեանն օգնելու։ Ելումտից բարեկարգութեան խնդիրն ահա այս վիճակին մէջ է, մինչդեռ Բարձր. Մեծ—Եպարքոսին նախագահութեան ներքև յանձնախումբ մը Գայիմէյի խնդրոյն վրայ կարգ ադրութիւն մ'ընելու կ'զբաղի։

Փոքր Ասիոյ բարեկարգմանց խնդրոյն նկատմամբ՝ Բ. Դուռը տակաւին Անգղիական դեսպանին ներկայացուցած ծրագրին պատասխանը չէ տըւեր։ Անցեալներն յիշած էինք թէ Թայմզ լրագիրը կըսէր թէ բարեկարգութիւններն անզգալի կերպիւ պիտի գործադրին։ Այս անզգալի բարեկարգութեանց մեր խելքը չէր հասներ, և կերևի որ Անգղիական կարևոր թերթ մը՝ Էքօնօմիսթ ևս՝ այս կարծիքէն է, քանզի կըսէ. "Մեր (այսինքն Անգղիոյ) իրաւունքն որ այնչափ բարձր հռչակեցաւ, իրապէս լաւ խրատներ տալու իրաւունքին մէջ կը սահմանափակի։ Այս բանը կատարին առակին կը նմանի, որ թագաւորի մ'անցնիլը տեսնելու համար խիստ սուղ վարձք վճարած էր, բայց յետոյ հասկցաւ որ կրնար առանց վարձք վճարելու ալ թագաւորին անցնիլը կատարելապէս տեսնել։" Էքօնօմիսթ ըսել կուզէ թէ Անգղիա կրնար Բ. Դրան Մենտորութիւն ընել՝ առանց երաշխաւորութեան ներքեւ մտնելու։ Բաղձալի է սակայն որ այս Մենտորութիւնը գործնական արդիւնք ցոյց տայ, և երբ անգղիական թերթեր իսկ Պիքօնսֆիլտի Մենտորութիւնը կը ծաղրեն, հետևցնելու է թէ օտարազգիք ինչ դաղափար կրնան ունենալ անոր վրայ։

Այս շաբթու հասած Թայմզի մէջ երկու նամակ կը գտնենք նշանակութեան արժանի. մին Ամերիկացի Միսիոնարայ կողմէն, որք անցեալները Մասիսի ըրած խորհրդածութեանց առթիւ Եւրոպական հասարակութեան առջև ալ կը յայտարարեն թէ "Կ. Պոլսոյ գլխաւոր Հայ թերթ մը, Մասիս, Լորա Պիքօնսֆիլտի ատենախօսութիւնը յիշելով կամբաստանէ գաբարոզիչներն իբր թէ Թուրքիոյ վիճակին վրայ սուտ վկայութիւն տուած են Գերմանիոյ կայսեր։" Ինչպէս այն ժամանակ Պատ. Կրինի մեզ ուղղած նամակին առթիւ ըսած էինք, այս ամբաստանութիւնն ընողը Լորա Պիքօնսֆիլտ էր. և Ամերիկացի Միսիոնարք Թայմզի մէջ հրատարակեալ նամակաւ կը յայտարարեն թէ Լորա Պիքօնսֆիլտ ծանր սխալանաց մէջ ինկած է, և Պ. Կրինի տուած բացատրութիւնները կըկրկնեն։ Մինչև ցարդ Լորա Պիքօնսֆիլտի կողմէն այս սխալանքն ուղղելու համար բացատրութիւն չտեսնուեցաւ։

Թայմզի հրատարակած միւս նամակը մայրաքաղաքիս Անկլիքան եկեղեցւոյն քահանայ դիտնական և հայասէր Պ. Բըրթիսի ղրչէն եղած է, որ մեր ազգին դէմ եղած զրպարտութիւնները կը հերքէ։ Այս նամակին թարգմանութիւնը Մանղումէի մէջ հրատարակուած ըլլալով, մեք ալ նոյնութեամբ հոս կը դնենք հանդերձ շնորհակալութեամբ առ ազնուամիտ հեղինակն։

"Առ հրատարակիչ Թայմզի.

"Տէր.

"Խաբուսիկ երա՞զ մ'է արդեօք, թէ լուրջ իրականութիւն, թէ նոր դարագլուխ մը բացուած է Նիրհող Ասիոյ, թէ Անգղիոյ ձեռք յանձնուած է ապագային լապտերն, որպէս զի լուսաւորէ այդ խաւար աշխարհներն ու ամայի վայրերն։ Եթէ Մոսկով պետութեան կոչումը նուաճել է զՀիւսիսային Ասիա, մեր երկրին իսկ ճակատագիրն է առաջնորդել Հարաւոյ 'ի քաղաքակրթութեան։ Անտարակոյս այդ երկուց պետութեանց իւրաքանչիւրն իւր շրջանին և սահմանաց մէջ կարող է օգտակար եղանակաւ գոր-

ծել և իւր անկախ գործողութեամբ ընթանալ դէպ 'ի նոյն բարի նպատակ։ Առանց խօսելու Հիւսիսային Հսկային վրայ, Բրիտանական պետութիւնը օրչափ և հսկայ է, Բրիտանիոն* չէ, այլ ուրիշներու գլխոյն և ձեռաց օգնութեան կարօտ է։ Արդ՝ մեր պաշտօնին կատարման համար ի՞նչ գործակատար և ի՞նչ միջնորդ ընտրելու համար։ Ասիացի ժողովուրդը կայ որ նախկին Բրիտանացւոց 'ի Հնդկաստան հաստատուելուն օգնեց։ Այս ազգն հաստատամիտ է իբրև մեր ազգն, բայց միանդամայն համբերութեան և հլութեան մասնաւոր յատկութեամբ օժտեալ է։ Այս ազգը անցեալն մէջ այնպիսի գործակատարներ մատոյց որ Եւրոպացիները գերազանցելով՝ Հնդկաստանի աւելի խորերը մտնելու և բնիկ տեղացւոց հետ առաւել նպաստաւոր պայմաններով բանակցելու յաջողեցան, և ինչպէս երբեմն՝ նոյնպէս այժմ կարող է պարզօրէն մեկնել և կատարել Եւրոպիոյ կամքն Ասիոյ նիկատմամբ։ Հայոց ազգին մասնաւոր յատկանիշն է որ 'ի վաղուց Ֆրանկաց հետ յարաբերութիւն հաստատելէ 'ի վեր անձկանօք խնդրած և ընդունած է Արևմտեան գաղափարներն, և անդադար գործածելով Արևմտեան հնարագիտութիւններն, արիաբար ընթացած է Արևմտեան յառաջդիմութեան պողոտային մէջ։ Կարելի չէ այսպիսի միջնորդ մը գտնել այլուրեք, Հայք Արևելից և Արևմտից մէջ մնութեան միակ օղակն և յորմարագոյն միջին եզրն են։ Սակայն ինչպէս որ Հայք իրև Արևելցի քաջայարմար են իւրեանց գիտակցութեան շնորհիւ Ասիոյ միւս ժողովրդոց հետ ամենաուղղակի հաղորդակցութիւն հաստատելու, նոյնպէս նշանաւոր հանդիսացած են ջերմ ազգայնութեան զգացմամբ։ Չկայ ազգ մը՝ որ Հայոց չափ նախանձախնդրութիւն ցուցած լինի թէ՝ իւր անխառն կենցաղին և թէ՝ իւր աւանդութեանց։ Հայ եկեղեցեաց մէջ ընտրութեան իրաւունքը չնչելու նպատակաւ Ռուսաց գործած ճգանց դէմ Հայք մեծ հաստատամտութեամբ մաքառելով՝ իւրեանց իրաւունքը պաշտպանեցին, և նշանակութեան արժանի է որ Ռուսաց երկրին մէջ Էջմիածնայ մեծ վանքն՝ որ է Կաթողիկոսի կամ իւրեանց եկեղեցւոյ գլխոյն բնակարանն և ազգին հզօր ապաստանարանն, երթևեկող բազմաթիւ անձանց մէջ սակաւք կը խօսին Ռուսերէն։ Ցանցելումն Հայոց ցուցուցած դիմադրութիւնք՝ որ յաջողութեամբ պսակուած են, կը հաստատեն թէ՝ մինչդեռ Հայք բռնակալութեան ճիրաններու մէջ դիւրակոր զէնք մը չեն կարող լինել, բայց ազատութեան ձեռաց մէջ զօրաւոր գործիք մը պիտի լինին։ Հայոց արենակցութիւնն իւրեանց դրացեաց հետ՝ որ այժմ Մահմետական են, և իւրեանց մշաքնչենաւոր հպատակաց այն է Քրիստոսի հետ, իրաւամբ արժանի կը հանդիսացնէ զայս ժողովուրդ շուրջանակի ցեղերը քաղաքակրթութեան շաւղին մէջ յառաջ վարելու։ Այսպէս, եթէ վայրենակ և խուժադուժ յեղուզակաց հուղկահարութիւնք օրինաց գործադրութեամբ արգիլուին և այդ հուղկահարք կամ սովամահ կորընչելու և կամ խաղաղ ապրելու հարկի մէջ դրուին, կարելի է որ հուսկ ուրեմն դաշտերն իջնեն ո՛չ թէ աւարելու՝ այլ մշակելու համար, և ո՞վ կարող է ուրանալ քաղաքային և միանդամայն կրօնական ապահովեալ ապատութեան լիուլի արդիւնքը։

Դիտողութեան արժանի կէտ մ'է թէ՝ Հայք ոչ թէ իշխանութիւն՝ այլ անդորրութիւն կը խնդրեն։ Կարող էին իշխանութիւն խնդրել, վասն զի իշխանութիւն վարելու անվարժ չէ սոցա ցեղը, եթէ ճշմարիտ է պատմութեան աւանդութիւնը թէ՝ Հայաստան ո՛չ միայն իւր յատուկ նախարարներն և թագակիրներն ունեցած է, այլ նաև Բիւզանդեան կայսրութեան ամենաբնակիր և ամենամտաւոր իշխաններ և քաջամարտիկ զօրավարներ տուած է։ Հայաստանէն եկած է Իսահակ փոխարքայ, որ Դավէնայի մէջ 'ի յիշատակ երախտագիտութեան ցունական ոտանաւորներով ներբողուած է։ Հայաստանէն ելած են կայսերք Մօրիկ, Լէոն, Բարսեղ և Յովհաննէս Զմշկիք։ Հայք կը յիշեն իւրեանց նախկին իշխանութիւնը, բայց չեն ակնկալեր։ կը փափաքին ուրիշներու ձեռօք ճաշակել 'բարւոք իշխանութեան քաղցրութիւնը։ Անդորրութեան կը բաղձան որ անցեալ ոսկեղինիկ աւուրց վաղեմի երանութիւնն է։ Արդեօք նոր արշալոյս մը կը ծագի։ Մինթ չե՞մք լսեր անդրէն Սիպիլլայի երգն՝ որ իբր թէ այսօր կը դայլայլէ։»

Պարոնայց յաւիտենից կարէ դեռ ակնարկն առնու անդրէն։

19 օգոստոս 1878 Կ. Գ. ԳՐԹԻՍ
Կ. Պոլիս

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 13 սեպտ.

Նախագահ մարաջախտը թշնամանած ըլլալու ամբաստանութեամբ դատաստանի ենթարկեալ Պոնաբարթեան Բէյի լրագրին պատասխանատուն 2000 ֆրանք տուգանաց, իսկ յօդուածը գրող խմբագիրն եռամսեայ բանտարկութեան և 2000 ֆրանք տուգանաց դատապարտեցաւ։

Փարիզ 13 սեպտ.

Անգղիա հաւանութիւն չտուաւ Յունաստանի նկատմամբ Դրան վրայ հաւաքական ազդեցութիւն 'ի գործ դնելու խորհրդին զոր Գերմանիա առաջարկեց։ Իտալիա ալ հաւանութիւն չպիտի տայ՝ եթէ բոլոր տէրութեանց միջև համաձայնութիւն չգոյանայ։

Կը հաստատեն թէ Գերմանիոյ առաջարկութիւնն յետաձգեցաւ։

Լոնտրա 14 սեպտ.

Ծովապետ Հօպարթ փաշան մօտ օրէն Կ. Պոլիս պիտի վերադառնայ։

Պէրլին 14 սեպտ.

Պիսմարք իշխանը Պէրլինի դաշնադրութեան Յունաստանի և Թարասապի վերաբերեալ կէտերուն անգործադրութեան նկատմամբ յանդիմանութիւն պարունակող հաւաքական ծանուցագիր մը տէրութեանց կողմէ Դրան ուղղելու համար ըրած փորձին մէջ չյաջողեցաւ։

Զրոյց կը պարտի թէ կառավարութիւնը Վիլհէլմ կայսեր դէմ նիւթուած նոր դաւադրութեան մը հետքը գտած է։ Բազմաթիւ մարդիկ ձերբակալեցան։

Լոնտրա 14 սեպտ.

Պ. Ռ. Վիլսոնի պաշտօնապէս հաւանութիւն արուեցաւ Եգիպտոսի ելումէն նախարարութիւնն ընդունելու։

Հռոմ 14 սեպտ.

Ֆանֆուլլա լրագիրը կըսէ թէ տէրութիւնք միջնորդութիւն պիտի շնորհեն Յունաստանի, բայց դիւանագիտական գործողութեան սահմանէն անդին չպիտի անցնին։

Պէլկրատ 14 սեպտ.

Թուրքо-Սերպական սահմանները գծելու պաշտօն ունեցող Եւրոպական յանձնաժողովին անդամները վաղը Նիշ պիտի երթան։

Նիշ-Եօրք 14 սեպտ.

Դեղին տենդը նուազիլ սկսած է Լուիզիանայի մէջ։

Աթէնք 14 սեպտ.

Յունաստանի և Թուրքիոյ միջև պատերազմն անհրաժեշտ ըլլալուն զրոյցը սուտ կը հանուի։

Թանգէր 14 սեպտ.

Քոլէրան նուազիլ սկսած է։

Այս առաւօտ հասած հեռագիրք

Փարիզ 15 սեպտ.

Այսօր Մաք-Մահոն մարաջախտ 50000 մարդոց զօրահանդէս մ'ըրաւ 'ի Վէնսէն։ Քէմպրիճի դուքսն և Ռուսաց Կոստանդին և Ալեքսիս մեծ դուքսերը ներկայ գտնուեցան։

Վիէննա 16 սեպտ.

Կառավարութիւնն որոշեց Պոսնիոյ ապըստամբութիւնը զօրաց բազմութեամբ ընկճել։

Սէմլին 16 սեպտ.

Պէլկրատէն լուր կուտան թէ Սերպիոյ և Ռուսիոյ միջև պայմանագրութիւն մը կնքուեցաւ, որով Սերպիա խօսք կուտայ 40000 մարդ պինեալ պահել, և Ռուսիա ալ կը խոստանայ ամսէ ամիս 250000 ռուբլի վճարել Սերպիոյ։

Պէրլին 16 սեպտ.

Վիլհէլմ կայսրն յառաջիկայ հոկտեմբերին տէրութեան գործոց անօրէնութիւնը վերատին ձեռքն առնլու կը փափաքի։

Պիսմարք իշխանը Պէրլին հասաւ։ Երեսփոխանաց ժողովն այսօր ընկերվարականաց դէմ առաջարկեալ օրինաց ծրագրին վրայ վիճաբանիլ սկսաւ։ Բազմաթիւ առենապետք յիշեալ ծրագրին դէմ խօսեցան։

Փարիզ 16 սեպտ.

Տէպա լրագիրը կըսէ թէ Փարիզի Օսմանեան դեսպան Ասրիֆի փաշան երէկ Միհրաթ փաշային դիր մը տուաւ Սուլթանէն, որ կը հրամայէ անոր Կիրիտ երթալ, և ասոր համար յատուկ շոգենաւ մը կը դնէ անոր տրամադրութեան ներքև։

Միհրաթ փաշան չաբթուս մէջ Մարսիլիայէն շոգենաւ նստելով ուղղակի Կիրիտ պիտի երթայ։

Լոնտրա 16 սեպտ.

Օսմ. Քոնս.		12 3/4
Փոխ.	1865	18
»	1869	17 1/4
»	1871	55
»	1872	24
»	1873	14 5/8
» Եգիպտ.		75 3/8
Անգղ. Քոնս		95 1/16

Փարիզ 16 սեպտ.

Օսմ. Քոնս. 12,87 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վագքիթ լրագիրը կը ծանուցանէ թէ մեծ տէրութեանց դեսպաններուն առաջին թարգմաններն երէկ Բ. Դուռն երթալով պնդեր են որ Ասիոյ Հայոց կենաց և ընչից ապահովութեան համար հարկ եղած միջոցներն անմիջապէս 'ի գործ դրուին։

Պաթումէն լուր կուտան թէ Օսմ. զօրաց յիշեալ քաղաքէն մեկնելէն ետև քառասուն հազարի չափ Ռուսական զօրք մտեր են հոն։

Լազերուն ու Չէրքէզներուն դաղթականութիւնը կը շարունակէ։ Արդէն 10000էն աւելի Չէրքէզ և Լազ հասած են Պաթումէն 'ի Տրապիզոն։

Մայրաքաղաքիս լրագրերէն մին կը ծանուցանէ երէկ թէ մայրաքաղաքիս Անգղիական դեսպանին կողմէ Ասիական Թուրքիոյ համար առաջարկեալ բարենորոգմանց ծրագիրն ընդունուեր է Վեհ. Սուլթանէն։

Թուրք լրագիր մը կըսէ թէ այս լուրը կանխահաս է։ Անգղիական ծրագիրը նախարարաց խորհրդին մէջ քննութեան առնուած է՝ Բ. Դրան կողմէ պատասխան ուրիշ ծրագրի մը հետ։ Նախարարաց խորհուրդը մինչև քանի մ'օր իւր որոշումը պիտի տայ։

— — —

Կըսուի թէ Այսթէֆանոսի Ռուսական զօրաց մատակարարութիւնը նորէն չորս ամսուան համար հաշի պայմանագրութիւն կնքեր է։

— — —

Արտահանի հրամանատար Հիւսէյին Սապրի փաշան՝ որ պատերազմական առեանի մ'առջև կը դատուէր, երեք տարի բանտարգելութեան դատապարտեցաւ հանդերձ ստիճանազրկութեամբ։

Սոյն դատակնիքը շաբաթ օրը գործադրեցաւ Սպարապետի դրան հրապարակին մէջ, յիշեալ Սապրի փաշային սուրն ու համազգեստը վերայէն առնուելով, և ոստիկանութեան յանձնուեցաւ Սինոպ ղրկէ 'ի բանտարկութիւն։

— — —

Վագքիթ լրագիրը կը ծանուցանէ թէ Բարձր. Միհրաթ փաշան Թուրքիա դառնալու հրաման խնդրելով Վեհ. Սուլթանէն, Ն. Կ. Վեհափառութիւնն ալ հաւանութիւն տուեր և հրաման ըներ է որ Միհրաթ փաշան տէրութեան ծովեղերեայ քաղաքներէն մին բնակի, և ասոր համար հանդստեան պատշաճ թոշակ մը կապեր, և ճանբու ծախուց համար ալ գումար մը շնորհեր է։

Շաբաթ օրը զրոյց ելաւ մայրաքաղաքիս մէջ թէ Եանեայի Հելլենական հիւպատոսը տեղւոյն իսլամ ժողովրդէն սպաննուեր է։ Վագքիթ լրագիրը սուտ կը հանէ այս զրոյցը։

— — —

Պ. Ե. Զարիֆի սեղանաւորն ուրբաթ օրն իւր ընտանեաց հետ մայրաքաղաքէս մեկնեցաւ Փարիզ երթալու համար, ուր ձմեռը պիտի անցունէ։

Վեհ. Սուլթանն իւր թիկնապահներէն մին շոգենաւը ղրկեց բարի ճանապարհ ըղձալու։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԷՕՀԱՄԸ ՈՒՄՕՒՄԻԷ

4 սեպտ. երկուշաբթի իրիկուն		13,32
5 սեպտ. երեքշաբթի առաւօտ		
բացուելուս		13,25
կէս օրին		13,23
Բումպիի երկաթուղի	ֆր.	49
Թոթաղրամ	վր.	317

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Կ. Պոլիս 4 Սեպտեմբեր

Սոսիէթէ Ժէնէրալի բաժ.	Անգղ. վր.	4, 3
» փոխանակութեան	»	3,38
Կ. Պոլսոյ Պանքային	»	6,30
Քրէտի Ժէնէրալ	»	5, 8
Քրէտի Օսթրօ—Թիւրք	»	—
Փոխ. 1863	Ֆր.	80
» 1865	»	85
» 1869	»	79
» 1872	»	24 3/4
» 1873	»	70
Թրամուայ	Օսմ. վր.	1 50

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

4 Սեպտեմբեր

Անգղ. վրա	դրչ.	109
Նարօլէոն ոսկի	»	87 4
Իմիէոիալ Ռուս	»	89 10
Կէրլիցի	»	51 12
Հինգ Ֆրանք	»	—
Հինգ Նոց	»	120 20
Պլանտ	»	179

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Պատրիարք հայրը շաբաթ օրը վերսային ապդու թագրիր մ'ուղ-

* Հսկայ հարիւրաթեւ և հարիւրագլուխ։

ղեց առ Բ. Դուռն՝ որպէս զի Հայոց գաղթականութեան առաջքն առնելու և ժողովրդեան արտին վատահութիւն ու ապահովութիւն ազդելու համար գործնական ազդու միջոցներ անօրինուին անյապաղ։

Լուծնուս նայելով, Մեծ-Եպարքոսն անմիջապէս հեռագրեր ղրկեր է թէ՝ երշնկա նոտով կարնոյ կուսակալին և թէ՝ տեսուչ ղրկուած Ալի Շէֆիզ պէյին, որպէս զի Հայերն համոզելով ապահովցնեն թէ ամէն պաշտպանութիւն պիտի ըլլայ իրենց և թէ քիչ օրէն հիմնական բարեկարգումն 'ի գործ պիտի դրուին և այլն։

Մեզ կը թուի թէ տեղական փորձեալ իշխանութեանց կողմէ տրուած կամ տրուելիք ապահովութիւնները մեծ ազդեցութիւն մը չեն կրնար ընել ժողովրդոց վրայ, այլ պէտք է կա՛մ խառն յանձնաժողով մ'երթայ հոն, կամ Պատրիարքարանի և Բ. Դրան կողմէ վատահութեան արժանի պաշտօնատարներ երթան անյապաղ և գաղթականութեան հոսանքին առաջքն առնուն, եթէ ուշ մնացած չեն։

Կարինէն օգոստ. 19 թուով Սթամպուլ լրագրին ուղղեալ նամակի մը մէջ հետեւեալ տողերը կը կարդանք.

«Ռուսերը մեզ հետ ունեցած ամեն յարաբերութեանց մէջ վերջին ծայր քաղցրութեամբ կը վարուին։ Իրենց ներկայութիւնը՝ երկար ժամանակէ 'ի վեր տաժանելի կեանքի մը ծանրութեան ներքն ընկճեալ կարնեցի ժողովուրդը գրեթէ ոգեւորեց, և առուտուրը մինչև ցարդ նմանը չտեսնուած աշխուժով և փութաջանութեամբ բանիլ սկսաւ։

«Բայց այս գործունէութիւնն երկար տեւողութիւն չխոստանար, վասն զի մեծ օրէնդրուսաց ետ քաշուելուն լուրը քաղքիս մէջ տարածուելուն պէս, վաճառականներէն շատերն սկսան բոլոր վաճառքնին ծախել լըցնել, որպէս զի երթան Ռուսիոյ նոր առած գաւառաց մէջ հաստատուին։

«Կարինէն կարս երթալու ճանբան՝ ամէն մ'ի վեր է որ՝ Հայ գաղթականներով լի է։ Հարիւրաւոր ընտանիքէ բաղկացեալ մեծամեծ կարաւաններ՝ ամէն օր ներսի գիւղերէն ու քաղաքներէն կարին կը հասնին, տակէց ալ դէպի Կարս երթալու համար։ Կարծես թէ Երուսաղէմ ուխտի կերթան։

«Ռուսաց զինուորական իշխանութիւններն ամէն դիւրութեան միջոց կը հայթայթեն այդ ընտանեաց ուղևորութեան համար, որոց մէկ մասն ալ Պաթում կերթան Արդվինի ճանբով։

«Երկրին ներսերը տիրած թշուառութիւնը խիստ մեծ է։ այս պատճառաւ Հայոց վրայ այսօրուանօրս տիրող միակ գաղափարն է Ռուսաստան գաղթել։ Հոն կը նշմարեն երկար տաեն է 'ի վեր սպասած ու փնտռուած փրկութիւնին։

«Մշոյ և Վանայ շրջականներէն և ուրիշ տեղերէ կարին հասնող գաղթականք, աղեկտուր նկարագրութիւններ կրնեն իրենց կրած երկար չարչարանաց վրայ, մանաւանդ այս վերջին տարիներուս մէջ։ Նշանը տրուած է, կրսեն, հոգի Հայաստանի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը շնչեց դնաց։ քիչ ժամանակէն բնաւ Հայ մը պիտի չմնայ։

«Պատմութեան մէջ չկայ այսպիսի գաղթականութեան օրինակ մը, բայց 'ի Հրէից ազգին Եգիպտոսէն ելնելէն։ որովհետև Հայաստան բոլորովին պիտի պարպուի։»

ՀԻՆ ՊԱՑԱՉԻՏԻ ՇՐՋԱԿԱՆԵՐԸ

Բ.

Քուրդերը ապրիլ ամսուն ոչխարներին չեն կթուր, որովհետև նրանք չափազանց նիհար լինելով՝ հապիւ կերակրուր են դառներին։ մայիսին ոչխարի կաթից միայն պանիր են պատրաստուր, իսկ յուլիսի սկզբից իւղ։ Իւղ պատրաստելու համար նախապէս կաթը շինուր են մածուն, ապա մածունը հարելով կաչու խըլոցի մէջ ստանուր են իւղ։ իսկ թանը եփելով ստանուր են «ժաժիկը» որին Փամբակուր կոչուր են չուժի, իսկ Երևանուր շոռ։ օգոստոս և սեպտեմբեր ամիսներուր կրկին պանիր են պատրաստուր, որ ժաժիկի հետ միասին շատ լաւ և երկար պահվուր է տիերի մէջ, որին առհասարակ «մոթալ» են կոչուր։ Քուրդերի առևտուրը գլխաւորապէս լինուր է աշնան և այդ գլխաւորապէս կայանուր է ոչխար, բուրդ, իւղ և պանիր ծախելուր։ Քուրդը և գրեթէ տեղական բոլոր ազգարնակութիւնները ոչխարի միսը նախադասուր են տաւարի մսից, և ահա վեցերորդ ամիսն է որ այստեղ տաւարի միս չենք տեսել։ Քուրդերը փայլաղամ (ամբարանոց) կենուր են իրանց ընտանիքներով և կահկարասիքով մէկտեղ վրաններուր, որ իրանք պատրաստուր են այծի մազից։ Ամեն ընտանիք ունի իր սեռական վրանը, որ ծառայուր է նրան մառանի, սեփական բնակարանի և հիւրանոցի տեղ, բայց ելաղասիքը (ցեղապետները) բացառութիւն են կազմուր. նրանք ունեն և առանձին վրան հիւրերի համար։ Քուրդի սովորական կերակուրն է մածուն և ժաժիկ։ Միս ուտուր են միայն այն ժամանակ, երբ իրանց հօտից մի ոչխարի ոտ յանկարծ կոտրվուր է կամ ոչխարը հիւանդալու պատճառով մորթուր են։ Իսկ պատուաւոր հիւրերին պատուասիրուր են դառնով փլաւով։ Դառնով փլաւը Քուրդի սիրելի և ամենաբուելի կերակուրն է։ Կերակուրը առանց բացառութեան ուտուր են ձեռով առանց դըրգալի, իսկ փլաւը առանց հացի։ Հացը փռուտուր են մի կլոր սեղան–տախտակի վրայ առանց ափոցի և դառնով փլաւը մի մեծ պղնձի թեփչիով դնուր են սեղանի մէջ տեղը։ Տանուտէրը ձեռները վեր քաշելով փլաւը ձեռներով բաժանուր է հիւրերին և մեր ահագին կտորները դարձեալ ձեռներով կտրատելով դնուր է փլաւի վրայ, վերջինիս վրայ աւելացնելով և մի մի բուռը ձուով իւղով և կանաչով պատրաստած կերակուրը, որին Փամբակուր փոլի են կոչուր։ Լաւաչ հացը, որ օրը երկու անդամ թխվուր է սաջի (բով) վրայ, ծառայուր է և ամանի, հացի և անձեռնոցիկների տեղ։ Հացից յետոյ ջուր է տըրվուր լուացվելու համար։ Հիւրասիրող Քուրդը մեծ պատուով և յարգանքով է ընդունուր իր հիւրին։ իսկ եթէ հիւրը լինի մի ծառայող (պաշտօնատար), մանաւանդ փոքր 'ի չատէ բարձր աստիճան ունեցող, տանուտէրը ձեռները կուրծին դրած պէտք է ծառայէ և չնստի, մինչև որ հիւրասիրվող պարոնը չհրամայէ նրան։ իսկ այսպիսի պատիւ տանտիրոջը թիւրք էֆէնդիների և փաշաների կողմից հաղուագիւտ պատահմունքներ են եղել։ Որքան պատիւ էին համարուր և զարմանք էին յայտնուր՝ երբ ես հրաւիրուր և խնդրուր էի տանտիրոջից մասնակցել ինձ հետ հացկերոյթի ժամանակ, և մանաւանդ երբ հետաքրքրվուր էի տեղեկութիւններ հաւաքել նրանց տնտեսական, հասարակական կեանքի վերաբերութեամբ։ Աւելի զարմացմամբ չրջապատուր էին ինձ կանայք և հետաքրքրվուր էին լսել իմ խօսակցութիւնս։ Երևի նրանք վատ դաղափարներ ունէին կազմած Ռուսների վրայ, որովհետև տեսնելով Ռուս ծառայողի նրանց հետ հասարակ և բարեկամական վարմունքը, նրանք իրանց զարմանքը արտայայտուր էին այսպիսի բառերով. «Ի՞նչ բարի մարդիկ են եղել Ռուսները*, հապա ի՞նչի մեր մարդիկը մեզ միշտ ասուր են թէ նրանք դավուրներ են, նրանք վատ, չափազանց հպարտ և չարահոգի մարդիկ են»։ Քուրդերը բացի իրանց մայրենի լեզուն ուրիշ լեզուով չգիտեն խօսել։ Բացառութիւնները շատ սակաւ են, և այն գլխաւորապէս Եղիպտիների մէջ։ Իմ ծառան Եղիպտի Քուրդն էր, և բացի իր մայրենի լեզուն՝ գիտէր խօսել բաւականին լաւ թէ Հայերէն թէ Թիւրքերէն։ Նա իմ և Քուրդերի խօսակցութեան ժամանակ թարգմանի պաշտօն էր կատարուր։

Դիադինի գաւառը հարուստ է հանքերով և հանքային ջրերով։ Այս տեղ կան ծծումբի, բորակի, պղնձի և երկաթի հանքեր։ Իմ ճանապարհս ընկնուր էր այն տարածութեան վրա, որ տեղ կային ծծումբի հանքեր։ Ահագին հարթ տարածութեան վրա փռած էին ծծմբային քարերի կտորներ, նրանց մէջ յաճախապէս աչքի էին ընկնուր շատ մաքուր ծծումբի կտորներ և մի քանի վերստաչափ տարածութեան վրայ ծծումբի հոտը մնուր էր քթիս մէջ։ Միւս հանքատեղերը ես տեսնելու միջոց չունեցայ։ Այս գաւառի շատ տեղից բղխուր են հանքային տաք ջրեր, յատկապէս ծծումբային ջրերի աղբիւրներ, բայց ես տեսայ միայն չորս տեղ։ մէկը Դիադինից հինգ վերստաչափ հեռաւորութեամբ՝ երկրորդը Զոլուզ անունով գիւղի մօտ, երրորդը և չորրորդը Մօլլաղարայ գիւղի մօտ, բոլորն էլ Եփրատի ափերի մօտ։ Ամենից լաւը և մաքուրը Մօլլաղարայի մօտինն է։ Նա իմ տեսածներից բոլորից էլ գերազանց էր թէ իր տաքութեամբ և թէ իր մաքրութեամբ։ Ես չունենալով ջերմաչափ՝ չկարողացայ իմանալ ջրի տաքութեան աստիճանը, բայց միայն կասեմ, որ ջուրը իր վիժման տեղը այնքան տաք էր, որ ոչ թէ լողանալ չէր կարելի, այլ և ձեռս երկու բօպէ անկարելի եղաւ ջրի մէջ պահել։ այդ տեղ ձուն խաշել կարելի կը լինի, թէ և ես իսկապէս չփորձեցի, բայց փորձողները հաստատեցին իմ կարծիքը։ Դրա համար էլ ջուրը իր ակնից ծծմբաքարի վրայով մի խողովակաձև առուակի միջով հոսելով թափվուր է բնութենից կազմած մի աւազանի մէջ։ Մէկ ուրիշ տեղ, Արծափ գիւղի մօտ, կայ սառն ու թթու ջուր, բայց ես չտեսայ։ Սակայն թէ հանքերը և թէ հանքային ջրերը թողված են առանց հետազօտութեան և առանց մշակելու։ ուրեմն թէ երկիրը և թէ թիւրքաց պետութիւնը ոչինչ օգուտ չեն քաղել դրանցից, գուցէ դրա պատճառը անտառի բացակայութիւնը լինի։

Դիադինի գաւառը իր լեռնոտութեամբ, օդի բարեխառնութեամբ և քաղցրահամ աղբիւրների բազմութեամբ կարելի է համեմատել Փամբակու և Լօռի գաւառների հետ։ Բայց մի մեծ տարբերութիւն կայ այդ երկիրների մէջ, որ իսկոյն ամեն ճանապարհորդի աչքին կանցնի։ Այդ տարբերութիւնը այս է, որ Դիադին թէ և հարուստ է իր հանքերով և հանքային ջրերով, սակայն զուրկ է անտառներից, այն ինչ Փամբակը և Լօռին ունեն մի քանի տեղեր հանքեր, օրինակ, պղնձի և երկաթի, հանքային ջրեր, յատկապէս երկաթի, նմանապէս և բաւականին հարուստ անտառներ, իսկ հողի արգաւանդութեան և պտղաբերութեան կողմից Դիադինը գերազանց է վերոյիշեալ երկու գաւառներից և։ Այդ երկիրը մեծ յարմարութիւն ունի թէ հողագործութեան և թէ անասնապահութեան, սակայն զինուորական, կամ լաւ ևս է ասել, աւազակաբարոյ, ծոյլ քուրդ ազգարնակութիւնը անընդունակ է օգուտ քաղել բնութեան այդ պարգևից։ նա չէ քաղում այն օգուտը, որ կարելի է սպասել պարապմանց այդ երկու ճիւղից ևս։ Բնակեցրու այս երկիրը Փամբակու և Լօռի աշխատասէր և գործունեայ թէ և նահապետական բնակիչներով, և մի քանի տարից յետոյ կարելի կը լինէր նրան բաղդատել Կովկասի ամենահարուստ երկիրների հետ։ Սակայն չնայելով քուրդերի գործից փախչելուն և անընդունակութեանը, դարձեալ նրանց մէջ հաղուագիւտ են աղքատներ, իսկ մուրացկաններ երբէք չես տեսնի։ Ամեն տեղ նը-կատուր ես անգործունէութիւն և բերրի հողը անմշակ։ Բացառութիւնը կազմուր են միայն Հայ գիւղերը, որոնք այս դաւառուր թուով հինգ են, բայց անցեալ պատերազմը խլելով Հայերի ձեռքից, և-կը և գօմէշը, արօրը և դուխանը, նը-րանց ևս դատապարտեց անգործութեան։ Այժմ Հայը ձեռքերը ծոցը դրած, որատատուք թափելով իր անմշակ հողերի, դեռ անցեալ տարվայ սկզբուր հերկած, բայց չցանած տեղերի վրա, զրկված աշխատելու ամեն միջոցից, անհանդիստ սրտով սպասուր է քաղաքակրթված և լուսաւորված Եւրոպայի վճռին։

Մարդիրոս Տէր Պետրոսեան
ՄՇԱԿ

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՑ

Գատրգիւղ Լատին եկեղեցւոյ փողոց 5

Պէրպէրեան վարժարանի տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել որ վարժարանին պարապմունքը կը լրանան քիչ օրէն և թէ իւր երրորդ տարեկան շրջանն կ'սկսի սեպտ. 11 երկուշաբթի օրն։

Տնօրէնութիւնս այս նոր շրջանին մէջ վարժարանին նոր ընդարձակութիւն մի պիտի տայ՝ յաւելեալ հոկտեմբերի վերջերն մեծադոյն շէնքի մի մէջ փոխադրելով զայն։

Առ այժմ նոր գալիք գիշերօթիկներու համար բաւական տեղ պատրաստուած է արդի շէնքին մէջ։

Նոյնպէս ուսումնական մասին ուսանողաց յաւելումներ նպաստող նոր կատարելութիւններ մուծանել մտադիր է տնօրէնութիւնն։

Դասուց սկզբնաւորութիւնն պիտի լինի սեպտ. 14 հինգշաբթի օրն։

Վարժարանիս մէջ կաւանդուին երկրորդական վարժարանաց (լիսէներու) բրօկրամին մէջ պարունակուած ամեն ուսմունք։

Բայց 'ի մայրենի, Գաղ. և Ցանկ. լեզուներէ, կուսուցուին նաև Անգլիերէն և Գերմաներէն լեզուներն։

Նախակրթութիւնն ալ խիստ խընամով և նոր մեթոտներով կաւանգուի փոքր տղայոց։

Գիշերօթիկ աշակերտներու տարեկան թոշակն է 32 ոսկի Օսմանեան, վեցամսեայն կանխիկ վճարելի։

Ցերեկեայ աշակերտաց եռամսեայ թոշակն է Ե. Դ. և Գ. կարգաց համար 9 մէճիտ, և Բ. Ա. և Նախապատրաստական կարգաց համար 6 մէճիտ կանխիկ վճարելի։

Մէկէ աւելի աշակերտ տուող ծնողաց զեղչ կը լինի։

Նոր աշակերտ տալ փափաքող ծնողք կը հրաւիրուին 'ի վարժարանն տեսակցիլ տնօրէնութեան հետ։

1878 սեպտ. 2 Հիմնադիր–Տնօրէն
Գատրգիւղ Ռ. Ց. Պէրպէրեան

ՏՕՔԹՕՐ Ց. ԹԻՐԵԱՐԵԱՆ

Վերոյիշեալ Տօքթօրն այս անգամ փարիզ իւր բժշկական ուսմունքն աւարտած և վկայագիրն ընդունելով մայրաքաղաքս դարձած ըլլալով, պատիւ ունի ծանուցանել արդոյ հասակակութեան թէ ուրբաթ օրերը իւր բնակարանը կէտիկ փաշա բաղնիքին դիմացի նորաշէն տունը ամեն տեսակ հիւանդութեանց ժամը 3 էն մինչև 8 ը ձրի պիտի նայի, երկուշաբթի օրերը 3էն մինչև 8 ը Մահմուտ փաշա Մ. Հ. Գափամաճեանի դեղարանը, և հինգշաբթի օրերը յիշեալ ժամերը Մուսալլա թաղը Էճզաճի Գրիգոր աղային դեղարանը պիտի գտնուի. իսկ մնացեալ օրերը իրեն դիմող հիւանդները իր տունը պիտի ընդունի։

3

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽԱՇԱՒԻՂ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ

Աշխատասիրեաց Յակոբ Յ. Մկրտչեան

Ի տէր հանգուցեալ բարեյիշատակ սիրելի որդւոյս հեղինակած լիշեալ պատկերազարդ գրքոյկն՝ որ մասնաւորապէս վարժարանաց համար յօրինուած է, ասկէց առաջ ուխտ ղրշ պղինձ դրամի գնով կը ծախուէր թէպէտ, բայց մեռազեղ դրամոյ օր ըստ օրէ բարձրանալը նկատելով այսուհետև մէկ 10նոց լիզթաղ բռմի վաճառել որոշուած է 'ի դիւրութիւն գնողաց։

կեդրոնատեղին է գրավաճառ Պաղտասար աղա Սրապեանի գրատունը 'ի Մէրճան չարշը։ Ուրիշ Հայ գրավաճառաց քով ալ կը գտնուի։

Ազգային վարժարանաց համար սովորական գնէն զեղչ կըլլայ։

Յովհ. Խան. Մկրտչեան

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՊԱՐԶԵՒԿՐԿՆԱԿ—ՏՈՄԱՐ

Որ պարունակէ

Փոխանակագրի, Հաշուեցուցի, Բեռնագրերի, Վարձագրի, Հաշուընթացի և այլոց ձևեր և օրինակներ

Ի ՊԷՏՍ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Ի Ն. Տէր-Լեւոնեանէ

Տպագրեալ արդեամբք և ծախիւք Մեծ. Տիգրան էֆէնտի Գարակէօզեանի

Կեդրոնատեղին է Պօլիս Մէրճան չարշը թիւ 33 Սրապեան Պաղտասար աղայի գրատունը. Բերայ Մ. Վայսի գրատունը, և ուրիշ Հայ գրավաճառաց քով։

Դին կազմեալ օրինակին երեք քառորդ մէճիտ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԵՍԱՐԱՑ

Թարգմանեց Ե. Մ. Ս.

Սոյն պատմութեան երկրորդ և վերջին հատորն ալ Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն 'ի լոյս ընծայուելով, կը ծախուի Եէնի Ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Դին 1 ֆրանք 25 սանթիմ։

ՇԱՀԷՆՆ 'Ի ՍԻՊԻՐ

ԿԱՄ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅ

Գրեց Ս. Տէր Սարգիսեանց

Կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց քով։ Դին 2 1/2 ֆրանգ։

ՆՈՐ ԴԱՄԱԳՐԲԵՐ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. ՄԱՍ

Հրատարակեց Գ. Մանդեան

Ի Զմիւռնիա

Դպրոցներու մէջ գործածուելու համար ընտանի լեզուով գրուած, զբաւարճալի և միանգամայն հրահանգիչ դասագիրք մ'է։

Կը գտնուի Կ. Պոլսոյ Հայ գրավաճառաց քով դին 35 սանթիմ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՂԴԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

Հեղինակ

Լէ-էէն Լէթէր

Աշխատասիրեաց Ա. Պիպէռեան

Հեղինակին հրամանաւ տպագրեցաւ

Սոյն գործնական քերականութիւնը Գաղղիոյ երկրորդական վարժարանաց նախապատրաստական կարգերուն համար ընդունուած ամենէն ընտիր և յարմարագոյն դասագիրքն ըլլալով, տարակոյս չկայ որ ազգային վարժարանաց մէջ ալ նոյն ընդունելութիւնը պիտի գտնէ։

Կը գտնուի Կ. Պոլիս Յ. Գավաֆեան և այլ գրավաճառաց քով, և Բերա Մոսիւ Վէրսի գրանոցը։ Դին 12 ղշ։



ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1 ՈՒՐԲԱԹ ՕՐԷՆ ՍԿՍԱԼ

ՄԻՆՉԵՒ ՍԵՊՏԵՄԲԵՐ 18

ԲՈՍՓՈՐԷՆ ԻԶՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ	Երթուղութիւն	Թիւ
12	Եէնիմահալլէն Մէզարպ· Պէյիւքտէրէ, Թարապիա, Եէնիքէյ, Ամէնիա, Էմիրկ· Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք։	34
12 30	Ր. և Ա. Գավագէն Եէնիմ. Մէզար. Պէյիւքա, Թար. Եէնիք. Էմիրկ· Ր. Հիսար, Պէպէք։	32
1 30	Եէնիմահ· Մէզարպ· Պէյիւքա· Թարապ· Եէնիքէյ. Ամէնի. Էմիրկ· Ր. Հիսար, Պէպէք։	18
2 15	Եէնիմ· Մէզարպ· Պէյիւքա· Թարապիա, Եէնիք· Էմիրկ· Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք։	33
3 15	Եէնիմահալլէն Մէզարպ· Պէյիւքա· Թարապիա, Եէնիք· Էմիրկ· Ր·Հիսար, Պէպէք, Արնավ· Գուբ· Օրթաք· Պէշիկ· (Ուրբաթ օրերը 3 1/2ին, Պէյլեր·)։	20
4 30	Եէնիմ· Մէզարպ· Պէյիքա· Թարապ· Եէնիք· Էմիրկ· Պոյաճ. Ր· Հիսար· Պէպէք, Արնավ· Գուբրուչ· Օրթաք· Պէշիկ։	34
5 30	Եէնիմահ· Մէզարպ· Պէյիւքա· Թարապ· Եէնիք· Էմիրկ· Ր· Հիսար, Արնավ· Պէյլ· Օրթաք· Պէշիկ·	25
6 15	Եէնիմահալլէն Պէյիքա· Թարապիա, Պէյքօղ, Եէնիքէյ, Էմիրկ· Գանլըճա, Ր. և Ա. Հիսար, Գանարիլի, Արնավ· Զէնկ· Պէյլեր· Օրթաքէյ, Գուզկ· Պէշիկթաշ, Իսկիւտար։	2
8 15	Ր. և Ա. Գավագէն Եէնիմահ· Մէզար· Պէյիք· Թարապիա, Պէյքօղ, Եէնիք· Էմիրկէն, Ր· Հիսար, Պէպէք, Արնավ· Գուբրուչ· Օրթաքէյ, Պէշիկթաշ։	33
10 15	Մէզարպուրնուէն Պէյիքա· Թարապիա, Եէնիքէյ, Էմիրկէն, Ր. Հիսար, Արնավ· Օրթաքէյ, Պէշիկթաշ։	22

Ա-ԷՆԱՎՈՐ ԷԼԷՆ

12	Արնավուտքէյէն, Գուբրուչ· Օրթաք· Պէշիկթաշ։	1
12 30	Պէպէքէն Արնավուտ· Գուբ· Օրթաք· Պէշիկ·	22
1	Արնավ· Գուբրուչ· Օրթաք· Պէշիկ· Գաղաթաշ։	25
1 30	Արնավուտքէյէն, Գուբրուչ· Օրթաք· Պէշիկթաշ։	1
2	Արնավուտքէյէն, Գուբրուչ· Օրթաք· Պէշիկթաշ։ Գաղաթաշ։	22
2 45	Արնավ· Գուբրուչ· Օրթաք· Պէշիկթաշ, Գաղաթ։	25
3 15	Արնավ· Գուբ· Օրթաք· Պէշիկ· Գաղաթաշ։	1
3 45	Արնավ· Գուբրուչ· Պէյլ· Օրթաք· Գուզկ· Պէշիկ· Գաղաթաշ։ (Բացի ուրբաթէ)։	32
10	Արնավուտքէյէն ուղղակի կամուրջ։	25
10 45	» » »	2

Ա-Ի-ԿՈՒ ԷԼԷՆ

12 30	Պէյքօղ, Բաշապ· Գանլըճա, Ա· Հիսար, Գանարիլի, Վանիքէյ, Զէնկէլքէյ, Պէյլերպէյ, Գուզկ·	21
12 30	Արնավ· Վանիքէյ, Զէնկէլ· Պէյլեր· Գուզկ· Գաղ։	2
1	Պէյիւքա· Քիրէճ· Թար· Պէյքօղ, Բաշպ· Ր· Փ· մահ· Գանլ· Ա· Հիսար, Վանիք· Զէնկէլ· Պէյլեր· Գուզկ·	19
2 15	Պէյիւքա· Պէյքօղ, Բաշապ· Գանլ· Ա· Հիսար, Գանա· Վանիք Զէնկ Պէյլ· Գուզկ·	17
4 15	Ր· և Ա· Գավաքէն Մէզարպ· Պէյքօղ, Բ· Պահճէ, Ր· մ· մահ· Ամէն· Գանլ· Պոյաճ· Ր· Հիսար, Պէպէք, Վանիք· Պէյլ· Սիրքէճի· (Բացի ուրբաթէ)։	21
4 30	Պէյիւքա· Պէյքօղ, Բաշապահ· Ր· փաշա մահալլէսի, Գանլ· Ա· Հիսար, Գանա· Վանիք· Զէնկէլ· Պէյլեր· Գուզկ· Գաղ·	19
9	Պէյիքա· Պէյքօղ, Բաշապ· Գանլըճա, Ա· Հիսար, Գանա· Վանիք Զէնկէլ· Պէյլերպէյ, Գուզկ· Իսկ· (Ուրբաթի օրերը Ր Փ· մահ·)	20
9 45	Վանիքէյէն ուղղակի կամուրջ։ (Բացի ուրբաթէ)։	1

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ե-ՐԹՈՒՆԵՆ ԵՂԷՐ

2	Պէշիկ· Օրթաք· Արնավ· Պէպէք Ր· Հիսար, Գանլըճա, Էմիր· Եէնիք· Թար· Պէյիւքա· Մէզ· Եէնիմ· Ր. և Ա. Գավագ։ (Ուրբաթի օրերը Գավագ չպիտի երթայ)։	21
1 30	Գաղ· Իսկ· Պէշիկ· Գուզկ· Օրթ· Պէյ· Զէնկ· Արնավ· Գանա· Ա· և Ր· Հիսար, Գանը Էմիրկէն, Եէնիք· Պէյքօղ, Թարապ· Պէյիւք· Եէնիմահ։	2
3	Պէշիքթ· Օրթաք· Արնավ· Պէպէք, Ր· Հիսար, Պոյաճ· Եէնիք· Թարապ· Պէյիւքա·	19
3 45	Պէշիկ· Օրթաք· Գուբրուչ· Արնավ· Պէպէք, Ր· Հիսար, Էմիրկ· Եէնիք· Թար· Պէյիւք· Եէնիմ։	25
5	Պէշիկ· Օրթաք· Արնավ· Ր· Հիսար, Էմիրկ· Եէնիք· Պէյքօղ, Թարապ· Պէյիւքտէրէ, Մէզարպ· Ր· և Ա· Գավագ։	33
6 30	Իսկ· Պէշիկ· Գուզկ· Օրթաք· Պէյլ· Զէնկ· Արնավ· Գանա· Ր· Հիսար, Պոյաճ· Եէնիք· Թար· Պէյիք։	20
8	Պէշիկ· Օրթաք· Արնավ· Ր· Հիսար, Էմիրկ· Եէնիք· Թարապ· Պէյիւքա· Մէզարպուրնու։	22
9 30	Պէպէք, Ր·Հիսար, Էմիրկ· Սիմէն· Եէնիք· Թար· Պէյիք· Մէզ· Եէնիմ։	32
10 15	Պէպէք, Ր· Հիսար, Պոյաճ· Եէնիք· Թարապ· Պէյիւք Մէզար· Եէնիմահ։	18
10 40	Պէշիկ· Օրթաք Արնավ· Պէպէք, Ր· Հիսար, Էմիրկ· Սիմէն Եէնիք· Թարապ· Պէյիւքա· Մէզարպ· Եէնիմ։	17
11 15	Պէպէք, Ր· Հիսար, Պոյաճ· Էմիրկ· Եէնիքէյ, Թարապիա, Պէյիւքա· Մէզարպ· Եէնիմահալլէ։	33

Ա-Ի-ԿՈՒ ԷԼԷՆ

1	Ուղղակի Արնավուտքէյ։	1
1 30	» »	22
2	» »	25
2 30	» »	1
3	» » (Բացի ուրբաթէ)։	32
9 15	Գաղաթաշ, Պէշիկթաշ, Օրթաք· Գուբրուչ· Արնավ·	25
10	Գաղաթաշ, Պէշիկթաշ, Օրթաք· Գուբ· Արնավ·	2
11 5	Գաղաթ· Պէշիկ· Օրթաք· Գուբրուչ· Արնավ։	25
11 35	Պէշիկթաշ, Օրթաք· Գուբրուչ· Արնավ։	2
12	Պէշիկթաշ, Օրթաք· Գուբրուչ· Արնավուտ· Պէպէք։	22

Ա-Ի-ԿՈՒ ԷԼԷՆ

2 30	Իսկ· Գուզ· Պէյ· Զէնկ· Վանիք· Գանա· Ա· Հիսար, Գանլ· Բաշապ· Պէյքօղ, Պէյիւքա· Եէնիմահ· (Ուրբաթի օրերը Ր Փ· մահ·)	34
9	Գուզկ· Պէյ· Զէնկ· Վանիք· (Բացի ուրբաթէ)։	1
9 30	Գուզկ· Պէյլերպ· Զէնկ· Վանիք· Գանա· Ա· Հիսար, Գանլ· Բաշապ· Պէյքօղ, Պէյիք· Մէզ· Ր և Ա Գավաքներ։	19
10 էն	Եօթը Սիրքէճիէն Պէյլեր· Վանիք· Պէպէք Ր· Հիսար, Պոյաճ· Գանը Սիմէն· Ր· փաշա մահ· Բաշ· Պէյքօղ։ (Բացի ուրբաթէ)։	21
10 15	Գաղաթ· Գուզկ· Պէյ· Վանիք· Զէնկ· Գանա· Ա· Հիսար, Գանլ· Ր· փաշա մահ· Բաշ· Պէյքօղ, Թար· Քիրէճալ· Պէյիք։	34
11 15	Գուզկ· Պէյ Զէնկ· Վանիք· Գանա· Ա· Հիսար, Գանլ· Բաշապ· Պէյքօղ, Պէյիքտէրէ։	20
11 40	Գաղաթ· Գուզկ· Պէյ· Զէնկ· Վանիք· Արնավ։	1

ՋՐՀԱՆ

Ամերիկայի Ջրհաններեր մեծ և փոքր, երկաթէ հաստատուն խողովակներով թէ ջրշեղջներու և թէ խորունկ հորերու համար աժան գներով կը ծախուի, Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔ

Փոքր «Վանձէր» կոչուած ձեռքով դարձող ու անքակ կար կարող գործիքը ամեն տեսակ կար մեծ դիւրութեամբ կը կարէ ու դինն ալ աժան է, երաշխաւորութեամբ կը տրուի, աւրուածները կը շտկուի ու կարել չգիտցողին դաս կը տրուի. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։



ՍՈՒԹԻՆԿ ՇԻՐՈՊ

Ցայսմիկ էր որ երախայք ծնանելէն մինչ երեք տարեկան հասակը գրեթէ շարունակ փորի ցաւ, փորհարութիւն, ստամոքսի անհանգստութիւն, անքուն մնալ, ջղային գրգռութիւն և այլն կունենան, մանաւանդ ակռա հանելու միջոցին, և այս նեղութիւններն ալ աւելի կը սաստկանան ամառուան տաք եղանակին։ ՍուԹինկ Շիրոպը վերոյիշեալ դժուարութեանց ամենուն ալ առաջքը կառնէ ու կը բժշկէ, որով երախան կը հանգչի ու կը զօրանայ յուրախութիւն մեծ իւր ծնողաց։ Գործածողները շատ գոհ են։ Ուզողը կրնայ փորձել. դինն աժան է. Նորածին երախայից կաթիլով կը տրուի, վեց ամիսէն վեր եղողին օրը երեք անգամ դրդալ. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

Այս տարեգիրը չարաթը երեք անգամ կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբթի և չարաթ օրերը։ Բաժանորդագրութեան տեղերն են Ղալաթիա Սանտրքճիլար ճատտէսի թիւ 198, Ղօրթ իան Մասիսի խմբագրատունը։

Իսկ դաւառաց մէջ հետեւեալ հոդաբարձուաց սենեակները։

ԻԶՄԻՐ. Սահփան աղա Տէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Թոսրով էֆ· Էսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Սահփան աղա Թանկէրեան.
ԹԷՔԻՐՏԱՂ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆէսլեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Խաչատուր աղաէլմասեան
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Ջաքարեան.
ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան.
ՄՈՒՇ Մկրտիչ աղա Փոթիկեան
ԵԱԾ. Մ. աղա Խաչիկեան.
ՖՈՔՇԱՆ Ֆէրհատ աղա Ի Ֆէրհատեան
ԵՐԶՆԿԱՑ. Թադէոս աղա Բագրատունի
ՍԻՎԼԻՒԻՍԱՐ. Սրժ. [illegible]

Ուրիշ քաղաքներէ [illegible] գրոնեն [illegible] տեղերէն [illegible] թղթակցիլ։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻԹԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ
ՂԱԼԱԹԻԱ ՆՕՐՕ ԽԱՆ